ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ, ք.Երևան, Գ. Նժդեհի փող. 23, հեռ. 447121 (229)
ԴԴ 9 – ՎԴ-41424/14
09.04.2014թ

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակակ
կազմակերպությու
Լոռու մարզ, ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 5

Ձեզ է ուղարկվում ՀՀ վարչական դատարանի 09.04.2014թ. թիվ ՎԴ/1401/05/10 վարչակ
գործով վճիռը:

Կից՝ ՀՀ վարչական դատարանի 09.04.2014թ. վճիռը:

ԴԱՏԱՎՈՐ Ռ. ՍԱՐԳՍՅԱՆ

Վարչական գործ թիվ ՎԴ/1401/05/10

ՎՃԻՌ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

09.04.2014թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը՝
նախագահությամբ՝ դատավոր Ռ.Սարգսյանի,
քարտուղարությամբ՝ Ա. Ավագյանի,

մասնակցությամբ՝ հայցվոր «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության,
/պետական գրանցման վկայականի համար 03 Ա 070486/,
/ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 59/,
/ներկայացուցիչ Արթուր Սաքունց/,
/անձնագիր AM 0460612, տրված 05.10.2011թ. 018-ի կողմից/,

պատասխանող Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության,
/ք.Երևան, Բագրևանդի 5/,
/ներկայացուցիչ Մանիկ Սանթրոսյան/,
/լիազորագիր թիվ ՊՆ/510-359, տրված 14.03.2013թ./,

դռնբաց դատական նիստում քննելով վարչական գործն ըստ հայցի «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ընդդեմ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը սնունդ, հագուստ, վառելիք և գրենական պիտույքներ մատակարարող կազմակերպությունների ցանկը տրամադրել պարտավորեցնելու, այդ կազմակերպությունների կողմից տրամադրվող սննդի, հագուստի, վառելիքի ու գրենական պիտույքների տեսակի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրել պարտավորեցնելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

Գործի դատավարական նախապատմությունը.

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը 23.04.2010թ. հայցադիմում է ներկայացրել ընդդեմ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը սնունդ, հագուստ, վառելիք և գրենական պիտույքներ մատակարարող կազմակերպությունների ցանկը տրամադրել պարտավորեցնելու, այդ կազմակերպությունների կողմից տրամադրվող սննդի, հագուստի, վառելիքի ու գրենական պիտույքների տեսակի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրել պարտավորեցնելու պահանջների մասին:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 28.04.2010թ. որոշմամբ հայցադիմումը մի մասով ընդունվել է վարույթ, մյուս մասով հայցադիմումի ընդունումը մերժվել է:

15.06.2010թ. նախնական դատական նիստում հայցվոր «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Ա. Սաքունցը միջնորդեց Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով կասեցնել ըստ հայցի «Հելսինկյան

Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության հայցադիմումն ընդդեմ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը սնունդ, հագուստ, վառելիք և գրենական պիտույքներ մատակարարող կազմակերպությունների ցանկը տրամադրել պարտավորեցնելու, այդ կազմակերպությունների կողմից տրամադրվող սննդի, հագուստի, վառելիքի ու գրենական պիտույքների տեսակի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրել պարտավորեցնելու պահանջների մասին գործի վարույթը մինչև Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի /նախագահող դատավոր Ա. Առաքելյան/ վարույթում գտնվող ըստ հայցի «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ընդդեմ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկի մասին հրամանն անվավեր ճանաչելու և տեղեկատվություն տրամադրել պարտավորեցնելու պահանջների մասին թիվ ՎԴ/1314/05/10 վարչական գործի ավարտը:

Հայցվոր «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության միջնորդությունը Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 15.06.2010թ. որոշմամբ բավարարվել է և վարչական գործի վարույթը կասեցվել է:

Հայցվոր «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության 25.11.2013թ. դատարան է ներկայացրել միջնորդություն՝ գործի վարույթը վերսկսելու վերաբերյալ, հայտնելով, որ թիվ ՎԴ/1314/05/10 գործով կայացվել է վերջնական դատական ակտ, իսկ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ մասի՝ «Գերատեսչական ցանկերը գաղտնագրվում են և հրապարակման ենթակա չեն» դրույթը՝ այնքանով որքանով չի վերաբերում գաղտնագրման ենթակա կոնկրետ տեղեկության, ճանաչել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27-րդ և 43-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 11.12.2013թ. որոշմամբ վարչական գործի վարույթը վերսկսվել է:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 25.02.2014թ. որոշմամբ գործը 19.03.2014թ. դատաքննության է նշանակվել:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 19.03.2014թ. արձանագրային որոշմամբ գործի քննությունն ավարտվել է, 09.04.2014թ. հայտարարվել է գործն ըստ էության լուծող դատական ակտի հրապարակման օր:

<u>Հայցվորի փաստարկները, հիմնավորումները և պահանջը.</u>

Հայցադիմումով հայցվորը հայտնել է, որ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) 2010թ. մարտի 15-ին տեղեկատվության հարցմամբ դիմել է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին (այսուհետ՝ պատասխանող)՝ խնդրելով, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի, տրամադրել տեղեկատվություններ հետևյալ հարցերի մասին.

1. ո՞ր կազմակերպություններն են մատակարարում սնունդ, հագուստ, վառելիք և գրենական պիտույքներ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը,

2. այդ կազմակերպությունները ի՞նչ տեսակի սննդով, հագուստով, վառելիքով ու գրենական պիտույքներով են ապահովում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը:

Ներկայացված տեղեկատվության հարցմանը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը 2010թ. մարտի 25-ին պատասխանել է հետևյալ կերպ «....համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի պահանջների, տեղեկատվություն տնօրինողը մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա պարունակում է ծառայողական, ինչպես նաև առևտրային գաղտնիք: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով սույն օրենքի դրույթների պահանջներով՝ տեղեկացնում եմ, որ Ձեր խնդրանքը բավարարել չենք կարող»:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը վերոշարադրված պատճառաբանությամբ մերժել է պահանջվող տեղեկատվությունը:

Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը (պաշտոնատար անձը), որն ընդունել է վիճարկվող իրավական ակտը կամ կատարել է վիճարկվող գործողությունը կամ չի կատարել որևէ հայցվող գործողություն, սակայն հայցվորի պնդմամբ պարտավոր էր այն կատարել, կրում է իր որոշման, գործողության կամ անգործության համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այդ իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27.1.-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքների իրականացումն ապահովվում է «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, որի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությունը /կամ/ դա ստանալու նպատակով օրենքով սահմանված նկարագրով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողի և ստանալու այդ տեղեկատվությունը»:

Նշված իրավանորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից պահանջվող տեղեկատվության չտրամադրումը հանգեցնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացրած «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված կազմակերպության տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտմանը:

Պատասխանողն իր մերժումը հիմնավորել է հետևյալ կերպ, «....համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի պահանջների, տեղեկատվություն տնօրինողը մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա պարունակում է ծառայողական, ինչպես նաև առևտրային գաղտնիք»:

Նշված հիմնավորումը չի բխում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից և օրենսդրությունից հետևյալ պատճառաբանությամբ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 13 մարտի 1998թ. թիվ 173 որոշմամբ հաստատված է Հայաստանի Հանրապետության պետական գաղտնիքի շարքին դասվող տեղեկատվությունների ցանկը, որի «Ռազմական բնագավառի տեղեկատվությունների բաժնում պահանջվող տեղեկատվությունը գաղտնիք պարունակող տեղեկատվությունների ցանկին չի դասվում:

Հայաստանի Հանրապետության կառավարության 17 դեկտեմբերի 2009 թվականի թիվ 1521-Ն որոշման «II. գնման առարկայի բնութագրի հաստատումը» բաժնի 6-րդ կետի 3-րդ մասում ասվում է. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնումների պլանը օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հաստատված գնումների անվանացանկն է, որը օրենքով նախատեսված պահանջներից բացի, յուրաքանչյուր գնման համար սահմանում է նաև գնման տվյալ գործընթացի կազմակերպման ժամկետները և գնման ձևը: Ընդ որում, այն գնումները, որոնք չեն կատարվում ռազմական տեխնիկայի, սպառազինության, ռազմամթերքի և ռազմատեխնիկայի միջոցների ապահովման նպատակով, օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հաստատված գնումների անվանացանկում

ընդգրկվում են որպես պետական կամ ծառայողական գաղտնիք չպարունակող գնումներ»: Նույն որոշման 7-րդ մասի 3-րդ կետի գ) ենթակետի համաձայն՝ պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում, մրցակցության բացակայությամբ պայմանավորված, կարող են կատարվել բացառապես ռազմական տեխնիկայի, սպառազինության, ռազմամթերքի և ռազմա-տեխնիկական միջոցների ապահովման համար անհրաժեշտ գնումները,.....,»:

Ըստ վերը նշված կառավարության որոշման տրամաբանության՝ կազմակերպության կողմից պահանջվող տեղեկատվությունը չի կարող գաղտնիք պարունակել, քանզի այն իր մեջ չի պարունակում ռազմական տեխնիկայի, սպառազինության, ռազմամթերքի և ռազմա-տեխնիկական միջոցներին վերաբերվող տեղեկատվություն:

Միաժամանակ տեղեկացնում է, որ պահանջվող տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից 2006թ. հուլիսի 26-ին «Քաղաքացիական նախաձեռնություն» շաբաթաթերթի լրագրող Նաիրա Բուլղադարյանի հարցմամբ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության մամուլի ծառայության պետ, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի մամլո քարտուղար Ս. Ճահսուվարյանի կողմից տրամադրվել է լրագրողին:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ, 65-րդ և 72-րդ հոդվածները, խնդրել է.

1. Պարտավորեցնել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը տրամադրել՝ սնունդ, հագուստ, վառելիք և գրենական պիտույքներ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը մատակարարող կազմակերպությունների ցանկը:

2. Պարտավորեցնել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը տրամադրել տեղեկատվություն այն մասին՝ թե այդ կազմակերպությունները ի՞նչ տեսակի սննդով, հագուստով, վառելիքով ու գրենական պիտույքներով են ապահովում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը:

<u>Պատասխանողի ներկայացրած փաստերը և առարկությունները.</u>

Պատասխանող Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից 17.05.2010թ. Հայաստանի Հանրապետության վարչական դատարան է ներկայացվել հայցադիմումի պատասխան, որով վերջինս հայտնել է, որ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի պահանջներով՝ ներկայացնում է 28.04.2010թ. ՎԴ/1401/05/10 որոշմամբ վարույթ ընդունված հայցվորի՝ տեղեկատվության տրամադրմանը պարտավորեցնելու պահանջի մասին հայցադիմումի պատասխանը:

Հայցվոր կազմակերպությունը խնդրել էր Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը տրամադրել հետևյալ տեղեկությունները, որոնց վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը մերժվել էր.

1. ո՞ր կազմակերպություններն են մատակարարում սնունդ, հագուստ, վառելիք և գրենական պիտույքներ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը.

2. այդ կազմակերպությունները ինչ տեսակի սննդով, հագուստով, վառելիքով ու գրենական պիտույքներով են ապահովում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը:

Հայցվորը, վկայակոչելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27-րդ, 27.1-րդ հոդվածները,

«Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ, «Մարդու իրավունքների և ազատությունների համընդհանուր հռչակագրի» 19-րդ, «Մարդու իրավունքների Եվրոպական Կոնվենցիայի» 10-րդ հոդվածները, գտնում է, որ խախտվել են տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու իրավունքը, որի հետ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը համամիտ չէ, գտնում է, որ հայցադիմումում՝ հայցվորի կողմից վկայակոչված իրավական ակտերի նորմերի վերլուծությունը կատարված է միակողմանի, առանց հաշվի առնելու և անտեսելու այլ օրենքների և իրավական ակտերի պահանջները, այդ թվում և իր կողմից վկայակոչված որոշ օրենքների և իրավական ակտերի սահմանափակող դրույթները:

Հայցապահանջն ամբողջությամբ անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝

1. 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պատվիրատուն պարտավոր է գնման ընթացակարգի արձանագրության մեջ տեղ գտած տեղեկատվությունը, բացառությամբ պետական կամ ծառայողական գաղտնիք հանդիսացող տեղեկատվության, տրամադրել ցանկացած անձի՝ վերջինիս կողմից նման պահանջ ստանալուց հետո՝ աշխատանքային հինգ օրվա ընթացքում:

2. 11-րդ հոդվածի համաձայն՝ եթե գնման պայմանագրի գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա պատվիրատուն գնման պայմանագիր կնքելուց հետո տեղեկագրում այդ մասին հրապարակում է հայտարարություն, բացառությամբ պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող գնումների:

3. 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մրցույթի տեսակներն են բաց և փակ:

4. 19-րդ հոդվածի համաձայն, եթե մրցույթով կատարվող գնումը պարունակում է պետական կամ ծառայողական գաղտնիք, ապա այն կատարվում է փակ մրցույթով:

5. 38-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, մրցույթը չկայացած հայտարարվելուց հետո տեղեկագրում հրապարակվում է հայտարարություն՝ նշելով մրցույթը չկայացած հայտարարվելու հիմնավորումը, բացառությամբ պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող գնումների:

6. 47-րդ հոդվածի համաձայն՝

1) Փակ մրցույթ անցկացվելու դեպքում տեղեկագրում մրցույթի հայտարարություն չի հրապարակվում, իսկ մրցույթի հրավերը տրամադրվում է բոլոր հնարավոր մասնակիցներին:

2) Պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող գնումներին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր հնարավոր մասնակիցների որոշման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 08.09.2005թ. թիվ 2274-Ն որոշմամբ հաստատված է պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող գնումների մասնակցելու իրավունք ունեցող բոլոր հնարավոր մասնակիցների որոշման կարգը, որի 6-րդ կետի համաձայն, պայմաններին համապատասխանող գնահատված մասնակիցները, որոնք սահմանված կարգով պատվիրատուի հետ կնքում են պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների պաշտպանությունն ապահովելու պարտավորագիր, համարվում են գնման տվյալ գործընթացի հնարավոր մասնակից, որի հիման վրա հնարավոր չէ տրամադրել կազմակերպությունների անվանումները:

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության անվտանգության (քաղաքացիների, հանրության և պետության կենսական կարևոր շահերի) ապահովման նպատակով որոշակի բնագավառի տեղեկություններ պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու, գաղտնազերծելու և պաշտպանելու կապակցությամբ ծագող հարաբերությունները, սահմանում է պետական և ծառայողական գաղտնիք հասկացությունը, գաղտնիության աստիճանները, գաղտնիք կազմող տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու, պահպանելու, գաղտնազերծելու, օգտագործելու իրավական հիմքերը, գաղտնիքին առնչվող հարաբերություններում պետական մարմինների լիազորությունները:

Նշված օրենքի 2-րդ հոդվածի համաձայն պետական գաղտնիքը Հայաստանի Հանրապետության ռազմական, արտաքին հարաբերությունների, տնտեսական, գիտատեխնիկական, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեության բնագավառների այն տեղեկություններն են, որոնք պաշտպանվում են պետության կողմից, և որոնց տարածումը կարող է ծանր հետևանքներ առաջացնել Հայաստանի Հանրապետության անվտանգության համար:

Ծառայողական գաղտնիքը նշված բնագավառի այն տեղեկություններն են, որոնք պաշտպանվում են պետության կողմից, և որոնց տարածումը կարող է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության անվտանգությանը:

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» ենթակետի համաձայն Հայաստանի Հանրապետության

կառավարությունը մշակում և հաստատում է պետական գաղտնիքների շարքին դասվող տեղեկությունների ցանկը:

Ի կատարումն նշված օրենքի 8-րդ և 12-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 13.03.1998թ. թիվ 173 որոշմամբ հաստատված է Հայաստանի Հանրապետության պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկը, որի «Ռազմական բնագավառի տեղեկություններ» մասի 4-րդ և 5-րդ կետերի համաձայն հայցվորի կողմից պահանջվող տեղեկությունները վերաբերվում են զորքերի գործունեության ապահովվածությանը, այլ նյութական միջոցներով ապահովելուն վերաբերող տեղեկություններին:

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ, 8-րդ, 12-րդ և 19-րդ հոդվածների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 19.08.1997թ. թիվ 350 որոշմամբ վերապահված լիազորությունների սահմաններում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի գաղտնի հրամանով սահմանվել է «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը», որով նույնպես հայցվորի պահանջած տեղեկությունները համարվում են պետական և ծառայողական գաղտնիք, նույն օրենքի 12-րդ հոդվածի համաձայն նշված հրամանը գաղտնագրված է և հրապարակման ենթակա չէ:

«Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում:

Նույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք:

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և 24-րդ հոդվածների համաձայն պետական և ծառայողական գաղտնիքներին առնչվել, ծանոթանալ կարող են միայն սահմանված կարգով նման տեղեկություններին առնչվելու, ծանոթանալու թույլտվություն ունեցող անձինք:

Հաշվի առնելով վերոնշյալ իրավական նորմերի պահանջները, որոնց վերլուծությունը հստակ ցույց է տալիս, որ հայցվորի պահանջած տեղեկությունները հանդիսանում են պետական և ծառայողական գաղտնիք, քանի որ անմիջականորեն վերաբերվում են Հայաստանի Հանրապետության զինված ուժերի թիկունքային ապահովվածությանը, ռազմամթերքին՝ սննդամթերք, իրային ունեցվածք, վառելանյութ, դրանց տեսակներին, անվանացանկին և դրանց տարածումը կարող է ծանր հետևանքներ առաջացնել Հայաստանի Հանրապետության անվտանգության համար:

Ելնելով վերոգրյալից՝ դատարանից խնդրել է ամբողջությամբ մերժել հայցադիմումը:

<u>Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Գործի լուծման համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահ Ա.Սաքունցի 15.03.2010թ. թիվ Ե/2010-067 գրությունը, որով կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին խնդրել է իրեն տրամադրել տեղեկություններ՝ ո՞ր կազմակերպություններն են մատակարարում սնունդ, հագուստ, վառելիք և գրենական պիտույքներ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը, այդ կազմակերպությունները ի՞նչ տեսակի սննդով, հագուստով, վառելիքով ու գրենական պիտույքներով են ապահովում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը,
2. Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի վարչական ապարատի ղեկավար Ա.Բրուտյանի 25.03.2010թ. թիվ 364/ԳԾ գրությունը, որով պատասխանողը հայցվորին հայտնել է, որ համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի՝ տեղեկատվություն տնօրինողը մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա՝ պարունակում է ծառայողական, ինչպես նաև առևտրային գաղտնիք, ուստի հացվորի խնդրանքը չի բավարարվում,

3. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի մամլո քարտուղար, գնդապետ Ս.Ծահսուվարյանի գրությունը, որով Ս.Ծահսուվարյանը հայտնել է «Քաղաքացիական առաջընթաց» ՍՊ ընկերության լրագրող Ն.Բուլղարյանին, որ «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն տրամադրվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության 2006թ.-ին սննդամթերքի ձեռք բերման մրցույթների արդյունքում սնունդ մատակարարող կազմակերպությունների և սննդամթերքի վերաբերյալ տեղեկատվություն,
4. «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահ Ա.Սաքունցի 14.03.2012թ. թիվ Ե/2012-14.03/94 գրությունը, որով կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին խնդրել է հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 06.03.2012թ. որոշման 2-րդ կետը՝ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ մասը՝ «Գերատեսչական ցանկերը գաղտնագրվում են և հրապարակման ենթակա չեն» դրույթը՝ այնքանով որքանով չի վերաբերվում գաղտնագրման ենթակա կոնկրետ տեղեկության, ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27-րդ և 43-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր, ուստի խնդրել է իրեն տրամադրել «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկի» պատճեն,
5. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, վարչական ապարատի ղեկավար Դ.Բենգլյանի 02.04.2012թ. թիվ 94 գրությունը, որով պատասխանողը հայցվորին հայտնել է, որ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 06.03.2012թ. որոշման 2-րդ կետը, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով ստեղծված հանձնաժողովը սկսել է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի՝ 2011թ. հուլիսի 9-ի թիվ 0144 հրամանի ուժը կորցրած ճանաչելու և «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը» հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի ոչ գաղտնի հրամանի նախագծի մշակման աշխատանքները: Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի ստորագրելուց հետո նշված հրամանը կներկայացվի սահմանված կարգով պետական գրանցման և մատչելի կլինի հանրությանը:

<u>Գործի լուծման համար էական նշանակություն չունեցող փաստերը.</u>

Գործի լուծման համար էական նշանակություն չունեցող փաստեր չկան:

<u>Վարչական դատարանի պատճառաբանություններն ու եզրահանգումները.</u>

Լսելով հայցվորի բացատրությունները, պատասխանողի առարկությունները, հետազոտելով գործում առկա գրավոր ապացույցները, դատարանը եզրակացրեց, որ հայցը ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ:

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը 2010թ. մարտի 15-ին Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին թիվ Ե/2010-067 գրությամբ խնդրել է իրենց տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. ո՞ր կազմակերպություններն են մատակարարում սնունդ, հագուստ, վառելիք և գրենական պիտույքներ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը,

2. այդ կազմակերպությունները ի՞նչ տեսակի սննդով, հագուստով, վառելիքով ու գրենական պիտույքներով են ապահովում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի վարչական ապարատի ղեկավար Ա.Բրուտյանի 25.03.2010թ. թիվ 364/ԳԾ գրությամբ հայցվորին հայտնել է, որ համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի՝ տեղեկատվություն տնօրինողը մերժում է տեղեկության

տրամադրումը, եթե դա՝ պարունակում է ծառայողական, ինչպես նաև առևտրային գաղտնիք, հետևաբար հացվորի խնդրանքը չի բավարարվել:

Հայցվորի փաստարկները՝ սնունդ, հագուստ, վառելիք և գրենական պիտույքներ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը մատակարարող կազմակերպությունների ցանկը և այդ կազմակերպությունները ի՞նչ տեսակի սննդով, հագուստով, վառելիքով ու գրենական պիտույքներով են ապահովում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը՝ այդ մասին տեղեկատվություն տրամադրել պարտավորեցնելու վերաբերյալ դատարանը հիմնավոր է համարում՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27.1-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

«Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը:

Տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում:

«Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝

1. Տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա՝

1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք.

2) խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը.

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ պետական գաղտնիքը Հայաստանի Հանրապետության ռազմական, արտաքին հարաբերությունների, տնտեսական, գիտատեխնիկական, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեության բնագավառների այն տեղեկություններն են, որոնք պաշտպանվում են պետության կողմից, և որոնց տարածումը կարող է ծանր հետևանքներ առաջացնել Հայաստանի Հանրապետության անվտանգության համար:

Նույն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և ծառայողական գաղտնիքի շարքին կարող են դասվել հետևյալ տեղեկությունները.

Ռազմական բնագավառում՝

ա/ զինված ուժերի ռազմավարական և օպերատիվ պլանների, օպերացիաների նախապատրաստման և անցկացման, զորքերի ռազմավարական, օպերատիվ և զորահավաքային ծավալման, նրանց մարտունակության և զորակոչային պահեստազորի ստեղծման ու օգտագործման վերաբերյալ փաստաթղթերի բովանդակության մասին.

բ/ ռազմարդյունաբերական համալիրի ծրագրերի, դրանց բովանդակության և կատարման արդյունքների, սպառազինությունների և ռազմական տեխնիկայի զարգացման ուղղությունների, դրանց մարտավարատեխնիկական բնութագրերի ու մարտական կիրառության հնարավորությունների մասին.

գ/ հատուկ կարևորության և ռեժիմային օբյեկտների տեղաբաշխման, նշանակության, պաշտպանվածության ու պատրաստականության աստիճանի, դրանց նախագծման և շինարարության, ինչպես նաև այդ օբյեկտների համար տարածքներ հատկացնելու մասին.

դ/ Հայաստանի Հանրապետության տարածքում դաշնակից պետությունների և Հայաստանի Հանրապետության զինված ուժերի միավորումների ու զորամասերի

տեղաբաշխման, իսկական անվանումների, կազմակերպչական կառուցվածքի, գինվածության և թվաքանակի մասին.

ե/ ռազմական դրության ժամանակ բնակչության պաշտպանվածության, ապահովվածության աստիճանի մասին:

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելն իրականացվում է ըստ դրանց բնագավառի կամ գերատեսչական պատկանելիության:

Պետական այն մարմինները, որոնց ղեկավարներն օժտված են տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու լիազորություններով, մշակում են գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերը, որոնցում ներգրավվում են՝

ա) պետական գաղտնիքի շարքին դասվող այն տեղեկությունները, որոնք տնօրինելու լիազորությամբ օժտված են իրենք.

բ) ծառայողական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունները:

Գերատեսչական ցանկերում նշվում են նաև ներգրավված տեղեկություններից յուրաքանչյուրի գաղտնիության աստիճանը: Այդ ցանկերը և դրանցում կատարվող փոփոխություններն ու լրացումները հաստատվում են պետական մարմինների համապատասխան ղեկավարների կողմից:

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ, 8-րդ, 12-րդ և 19-րդ հոդվածների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 19.08.1997թ. թիվ 350 որոշմամբ վերապահված լիազորությունների սահմաններում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի գաղտնի հրամանով սահմանվել է «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը», նույն օրենքի 12-րդ հոդվածի համաձայն նշված հրամանը գաղտնագրված է և հրապարակման ենթակա չէ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 13.03.1998թ. թիվ 173 որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության պետական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունների ցանկը:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության դիմումի հիման վրա՝ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի «զ» ենթակետի, 12-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 06.03.2012թ. կայացված որոշմամբ որոշել է՝

1. «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի «զ» ենթակետը և 12-րդ հոդվածի 6-րդ մասը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ մասի՝ «Գերատեսչական ցանկերը գաղտնագրվում են և հրապարակման ենթակա չեն» դրույթը՝ այնքանով, որքանով չի վերաբերում գաղտնագրման ենթակա կոնկրետ տեղեկության, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27-րդ և 43-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 06.03.2012թ. որոշման 8-րդ կետի 11-րդ պարբերությունում մասնավորապես նշվել է, որ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը գտնում է, որ ներկա ընթացակարգով գերատեսչական ցանկերի գաղտնագրումը դուրս է տեղեկությունների գաղտնագրման՝ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իրավակարգավորման ընդհանուր տրամաբանության շրջանակից, և դրանց ոչ հրապարակային բնույթը՝ այնքանով, որքանով չի վերաբերում գաղտնագրման ենթակա կոնկրետ տեղեկության, չի հետապնդում պետական անվտանգության շահերի պաշտպանության իրավաչափ նպատակ և խնդիրներ է հարուցում մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում:

Բացի վերը նշվածից դատարանը անհրաժեշտ է համարում նշել նաև, որ հայցվորի կողմից հայցադիմումին կից ներկայացվել է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի մամլո քարտուղար, գնդապետ Ս.Ճահսուվարյանի գրությունը, որով Ս.Ճահսուվարյանը հայտնել է «Քաղաքացիական առաջընթաց» ՍՊ ընկերության լրագրող

Ն.Բուլղարյանին, որ «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն տրամադրվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության 2006թ.-ին սննդամթերքի ձեռք բերման մրցույթների արդյունքում սնունդ մատակարարող կազմակերպությունների և սննդամթերքի վերաբերյալ տեղեկատվություն:

Այսինքն Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը մի դեպքում տրամադրում է նմանատիպ տեղեկատվությունը, մյուս դեպքում նշում է, որ այն իրենից ներկայացնում է պետական և ծառայողական գաղտնիք, որպիսի հանգամանքը դատարանը գնահատում է, որպես վարչական մարմինի կողմից անհավասար մոտեցում ցուցաբերելու վարքագիծ միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ:

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հայցվող բարենպաստ վարչական ակտի, ինչպես նաև հայցվող գործողության կամ դրանից ձեռնպահ մնալու իրավաչափությունը որոշվում է դատական ակտի կայացման դրությամբ ձեռք բերված ապացույցների շրջանակում և դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա:

Տվյալ դեպքում հայցվորի կողմից հայցվող տեղեկության տրամադրման իրավաչափության որոշման հարցը քննելիս, դատարանը հիմք է ընդունում դատական ակտի կայացման դրությամբ ձեռք բերված ապացույցները և դատական ակտի կայացման պահին գործող վերը նշված օրենքներում պարունակվող դրույթները, իսկ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 06.03.2012թ. որոշմամբ՝ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ մասի՝ «Գերատեսչական ցանկերը գաղտնագրվում են և հրապարակման ենթակա չեն» դրույթը կիրառման ենթակա չէ, քանզի այն ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27-րդ և 43-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

Այսպիսով, վերը նշված իրավական և փաստական հանգամանքների համադրման արդյունքում դատարանը հաստատված է համարում, որ պահանջվող տեղեկությունը պատասխանողը պարտավոր էր տրամադրել, ինչը սակայն պատասխանողը չի արել, այսինքն՝ գործել է ոչ իրավաչափ, որպիսի գործողությունների արդյունքում անհիմն կերպով հայցվորին մերժել է նշված տեղեկատվության տրամադրումը, հետևաբար նման պայմաններում հայցվորի պահանջը հիմնավոր է և ենթակա բավարարման, քանի որ այն բխում է «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի, «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 12-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 06.03.2012թ. որոշման պահանջներից, ուստի նման պայմաններում հայցվորի պահանջները հիմնավոր են և ենթակա են բավարարման:

Դատարանը, քննարկելով դատական ծախսերի հարցը, գտնում է, որ այն բաղկացած է որ միայն պետական տուրքից, որի հատուցման պարտականությունը դրվում է Հայաստանի Հանրապետության վրա՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ կրում է մյուս կողմի դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն, եթե պատասխանող է հանդիսացել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձը, ապա դատական ծախսերը դրվում են Հայաստանի Հանրապետության կամ համապատասխան համայնքի վրա, եթե պատասխանողի որոշումը, գործողությունը կամ անգործությունը դատարանը ճանաչել է ոչ իրավաչափ:

Տվյալ դեպքում, հայցվորը վճարել է 8000 դրամ պետական տուրքի գումարը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատասխանող է հանդիսանում պետական մարմինը, որի դեմ կայացվել է վճիռ, հետևաբար դատական ծախսի՝ պետական տուրքի, հատուցման պարտականությունը կրում է Հայաստանի Հանրապետությունը, ուստի վերջինիցս հօգուտ հայցվորի ենթակա է բռնագանձման 8000 դրամ՝ որպես հայց ներկայացնելու համար վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ, 114-րդ, 123-127-րդ հոդվածներով, Հայաստանի

Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածներով, դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության հայցը բավարարել.

Պարտավորեցնել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությանը տրամադրել՝ սնունդ, հագուստ, վառելիք և գրենական պիտույքներ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը մատակարարող կազմակերպությունների ցանկը,

Պարտավորեցնել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը տրամադրել տեղեկատվություն այն մասին՝ թե այդ կազմակերպությունները ի՞նչ տեսակի սննդով, հագուստով, վառելիքով ու գրենական պիտույքներով են ապահովում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը:

Հայաստանի Հանրապետությունից հօգուտ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության բռնագանձել 8000 դրամ պետական տուրքի գումար:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և կարող է բողոքարկվել վերաքննության կարգով Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանին:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ Ռ. ՍԱՐԳՍՅԱՆ